ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

✉ 3304. Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 2, ☎ (010) 311-342, էլ.փոստ. syuniq@prosecutor.am

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ
ելքի № 65/3800-24 թերթ
«04» հուլիս 2024 թ.

**ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանուն**

Համայնքային շահերի խախտման փաստի առկայությամբ պայմանավորված՝ առաջարկում եմ ՀՀ վարչական դատավարության կարգով ողջամիտ ժամկետում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված լիազորության շրջանակներում վիճարկել Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի՝ 2006թ. մայիսի 22-ի որոշումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 09-063-001-024 կադաստրային ծածկագրով, 4.824հա հողամասը Լիանա Մարտունի Արզանյանի ընտանիքին անհատույց սեփականության իրավունքով օտարելու մասին, և դրա հիման վրա 2006թ. մայիսի 22-ի՝ հողամասի նվիրատվության մասին պայմանագիրը, և որպես գործարքի անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել Լիանա Մարտունի Արզանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող՝ 09-063-105-026 կադաստրային ծածկագրով, 19.88հա հողամասն Արտյուշա Մինասյանին օտարելու մասին Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի՝ 2009թ. մայիսի 05-ի N05Ա որոշումը:

Անհրաժեշտ է ներկայացված հայցադիմումի և քննության արդյունքների մասին սեղմ ժամկետում հայտնել Սյունիքի մարզի դատախազությանը:

Կից ուղարկվում են հայցադիմում ներկայացնելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները.

1. ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկ նախկին համայնքի ավագանու 2004թ. սեպտեմբերի 10-ի որոշման քաղվածքի պատճեն՝ 1 թերթ:
2. Հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու վիճակահանության մասին 13.09.2004թ. արձանագրության պատճեն՝ 2 թերթ:
3. ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկ նախկին համայնքի ղեկավարի 2006թ. մայիսի 22-ի որոշման պատճեն՝ 1 թերթ:
4. Հողամասի նվիրատվության մասին 22.05.2006թ. պայմանագրի պատճեն՝ 2 թերթ:

5. ՀՀ կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանմանը հասցեագրված Լիանա Արզանյանի դիմումի պատճեն՝ անշարժ գույքի սեփականության վկայական տալու մասին՝ 1 թերթ:

6. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը՝ 6 թերթ:

7. 23.02.2007թ. անշարժ գույքի՝ վարելահողի առուվաճառքի պայմանագրի պատճեն՝ 2 թերթ:

8. ՀՀ կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանմանը հասցեագրված Լյովա Արզանյանի դիմումի պատճեն՝ անշարժ գույքի սեփականության վկայական տալու մասին՝ 1 թերթ:

9. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը՝ 6 թերթ:

10. ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկ նախկին համայնքի ավագանու 2009թ. մարտի 31-ի որոշման պատճեն՝ 1 թերթ:

11. 2009թ. մայիսի 04-ի՝ համայնքային սեփականություն հանդիսացող 19.88հա հողամասն աճուրդով «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը վաճառելու և 2009թ. մայիսի 04-ի հողամասերի աճուրդով վաճառքի արդյունքների մասին արձանագրությունների և նույն հողամասը Արտյուշա Մինասյանին օտարելու մասին Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2009թ. մայիսի 05-ի N05Ա որոշման պատճենները՝ 3 թերթ:

12. 2009թ. մայիս 18-ի՝ հողի առուվաճառքի պայմանագրի պատճեն՝ 2 թերթ:

13. 2009թ. մայիսի 18-ին ՀՀ կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանմանը հասցեագրված Արտուշ Մինասյանի դիմումի պատճեն՝ անշարժ գույքի սեփականության վկայական տալու մասին՝ 1 թերթ:

14. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը՝ 5 թերթ:

15. 2019թ. փետրվարի 22-ին ՀՀ կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանմանը հասցեագրված Լյովա Արզանանի դիմումի պատճեն՝ անշարժ գույքի սեփականության վկայական տալու մասին՝ 1 թերթ:

16. 2019թ. փետրվարի 27-ին Լյովա Արզանանի, Գայանե Արզանյանի և Մարտունի Արզանյանի՝ 09-063-0105-0027 կադաստրային ծածկագրով 12.58հա հողամասի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճեն՝ 2 թերթ:

17. «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը 15.11.2017թ. արտահերթ ժողովի արձանագրության պատճեն՝ 1 թերթ:

18. Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ավագանու 2009թ. հուլիսի 08-ի որոշման, 2009թ. հոկտեմբերի 01-ի՝ համայնքային սեփականություն հանդիսացող 12.58հա հողամասն աճուրդով «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ

ընկերությանը վաճառելու և 2009թ. հոկտեմբերի 01-ի հողամասերի աճուրդով վաճառքի արդյունքների մասին արձանագրությունների և նույն հողամասը Արտյուշա Մինասյանին օտարելու մասին Սյունիքի մարզի նախկին Ներքին Խնձորեսկ համայնքի ղեկավարի 2009թ. հոկտեմբերի 02-ի N06Ա որոշման պատճենները՝ 4 թերթ:

19. 2009թ. հոկտեմբերի 09-ի՝ հողի առուվաճառքի պայմանագրի պատճեն՝ 2 թերթ:

20. 2009թ. հոկտեմբերի 09-ին ՀՀ կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային ստորաբաժանմանը հասցեագրված Արտուշ Մինասյանի դիմումի պատճեն՝ անշարժ գույքի սեփականության վկայական տալու մասին՝ 1 թերթ:

21. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ 6 թերթ:

22. «Ներքին Թաղի Հայարփի» ՍՊ ընկերությանը 15.11.2018թ. արտահերթ ժողովի արձանագրության պատճեն՝ 1 թերթ:

23. 2019թ. փետրվարի 27-ին Լյովա Արզանանի, Գայանե Արզանյանի և Մարտունի Արզանյանի՝ 09-063-0105-0026 կադաստրային ծածկագրով 19.88հա հողամասի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճեն՝ 2 թերթ:

24. Մարտունի Մելիքի Արզանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշման պատճեն՝ 9 թերթ:

25. Սենիկ Օհանջանյանի, Արմինե Օհանջանյանի, Ռաֆիկ Դիլանչյանի,Սամվել Մաքունցի, Մարտունիկ Բուդաղյանի,Վոլոդյա Արզանյանի, Սանթրիկ Մաքունցի ցուցմունքները՝ 59 թերթ:

26. Վկայականի պատճեն՝ 1 թերթ:

**Մարզի դատախազ, արդարադատության**
**առաջին դասի խորհրդական՝**

**Մ.Պողոսյան**

6/4/2024

X

ՄԱՍԻՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MASIS 3408850364